

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի շնորհավորական ուղերձը մայիսյան հաղթանակների առթիվ

Հարգելի հայրենակիցներ

Բեռլինի և Շուշիի պատմական հաղթանակները, որոնք ձեռք բերվեցին հայ քաջորդիների սիրանքների և արյան գնով, ապահովեցին Հայոց հայրենիքի անվտանգությունն ու խաղաղությունը, խորհրդային Հայաստանի ծաղկումն ու զարգացումը և Արցախի ազատագրումը:

Բեռլինի և Շուշիի նվաճումները, փառապանծ Հայոց բանակը պահպանեց նաև այս տարվա ապրիլյան հերոսամարտերում:

Շնորհավորում եմ ձեզ Հաղթանակների օրվա՝ մայիսի 9-ի կապակցությամբ, ցանկանում տևական խաղաղություն, միաբանություն, համազգային նպատակների իրագործում և նորանոր հաղթանակներ:

Գեղարքունիքի մարզպետ՝ Ռաֆիկ Գրիգորյան